

Выпуск 1

keyinchalik tarixchilar sifatida nom qoldirgan Ptolomey, Aristobo'l, Onesikrit, Kallisfen va Haresslar harbiy yurishlarda qatnashganlar. Ular O'rta Osiyoda ham bo'lganlar hamda Aleksandr yurishlari davomida bo'lib o'tgan turli xil voqeya va hodisalarni yozib borganlar. Afsuski, ularning ma'lumotlari bizgacha saqlanib qolmagan. Keyingi davr mualliflari ularning ma'lumotlaridan foydalanib Alekdandr Makedonskiy yurishlari haqida hikoya kiladilar.

Aleksandrning eng birinchi tarixchisi asli Olinf shahridan bo'lgan Kallisfen (mil. avv. IV asr) Aristotelning jiyani edi. U Aleksandrning rasmiy tarixshunosi bo'lib, harbiy yurishlarda u bilan birga yurgan. Tarixchining mil. avv. 327 yilda Baqtriyada bo'lganligi haqida ma'lumotlar bor. Tadqiqotchilarning fikricha, Kallisfen bizgacha saqlanib qolmagan asarida Baqtriya va So'g'diyonaga harbiy yurishlar boshlanishi haqida ma'lumotlar bergan bo'lishi kerak. Keyinchalik uning bu asari "Aleksandr haqida roman" degan nom olib, mil. avv. II-I asrlarda Misrda grek tilida tuziladi. Keyinchalik ko'p marta kayta ishlanib, IV asrda Yuliy Valeriy tomonidan lotinga tarjima kilinib ko'p joylarda, jumladan, musulmon Sharqida ham mashhur bo'ladi.

Kallisfendan tashqari Aleksandr Makedonskiy yurishlarida qatnashib bu yurishlar haqida jumladan, O'rta Osiyo haqida yozib qoldirgan larissalik Poliklit va astipaliyalik Onesikritni ham eslatib o'tish joizdir. Yurishlar haqida hikoya kilar ekan, ular, o'zlari o'tgan mamlakatlar va mahalliy aholining urf-odatlarini haqida ham yozib qoldirganlar. Misol uchun, Poliklit Kaspiy dengizi va Tanais (Sirdaryo) bo'yida yashovchi qabilalar haqida, Onesikrit Girkaniyaga ta'rif berar ekan, Baqtriyaliklar va so'g'diylarning urf-odatlarini hamda an'analari haqida ma'lumot beradilar. Bu mualliflarning asarlaridan keyinchalik Kursiy Ruf va Arrian foydalanganlar.

ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(ՀԱՅԱՍՏԱՆ)

Թորգոմի «Մրրիկ» խմբի սահմանանցումը

Մասուն մարտական ուժեր առաքելու որոշումը Հ.Յ.Դաշնակցության կողմից ընդունվել է դեռևս 1904 թ. հունվար-փետրվար ամիսներին Սոֆիայում կայացած կուսակցության 3-րդ Ընդհանուր ժողովում: Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, Մասունը պետք է դառնար ՀՅԴ գործունեության այն գլխավոր վայրերից մեկը, ուր պետք է կենտրոնանային կուսակցության հիմնական մարտական ուժերն ու միջոցները:

«Այդ ձեռնարկները պիտի ըլլան յարձակումներ թրքական պահականոցներու և փոստերու վրայ. աւերում կառավարական հիմնարկութիւններու, սպանութիւն կամ գերում կառավարական պաշտօնեաներու: Նայելով ձեռնարկներու բնատրութեան, Խմբերը կրնան ըլլալ մեծ կամ շատ փոքր, բայց ցանկալի է որ ամէն մէկ խումբ բաղկացած ըլլայ ոչ աւելի քան 30 հոգիէ: Այս վերջին որոշումը ժողովը կարելոր համարեց այն տեսակետով, որ կարելի կ'ըլլայ շատ խմբեր կազմակերպել:

Выпуск 1

Բոլոր այդ ձեռնարկումները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ և տեղի չպիտի ունենան միաժամանակ»¹:

Ամենուր տիրում էր մարտական մթնոլորտ: Հենց այդ ժամանակ Թուման Թումանյանի (Թորգոմ) ձիավոր խումբը Կովկասից անցնում է Խնուս, այնտեղից՝ Մշո դաշտ և զինվորական հանդիսավորությամբ մտնում է կուռ կազմակերպության մեջ: Գիշերային ճամփորդությունը Սասուն ստանում է զորաշարժի բնույթ, երբ գյուղից գյուղ էին անցնում:

Խմբի անվտանգ անցումը նախապատրաստելու և ուղին ճշտելու նպատակով թուրքական Բասեն է անցնում հայտնի Մենակը, որը «յուր անխոնջ աշխատասիրությամբ պատրաստում է զիծ, գնում է Սասուն 1903 թվականի սկզբին և վերադառնում Բասեն: Հեռագրում է Կարս, որ զիծը պատրաստ է և երբ ջրերը իջնեն ու լեռները բացվին անմիջապէս ճամբա հանվին զինատար խմբերը»²:

1903 թ. գարնան վերջերին ՀՅԴ Բյուրոյի ՀՅԴ «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտէի որոշմամբ 23 (քսաներեք)³ հեծյալներից բաղկացած «Սրբիկ» մարտական հեծելախումբը պետք է անցնէր սահմանն ու մեկնէր Սասուն⁴: 1902 թ. վերջին ՀՅԴ Կարսի Կենտրոնական կոմիտէի հանձնարարությամբ Բասեն է անցնում Մենակը <<պատրաստելու այնտեղից դէպի Սասուն զիծը>>⁵: Այս ընթացքում Կարսի մարզում Թորգոմի գլխավորությամբ կազմավորվում է <<Սրբիկ>> մարտախումբը, որը 1903 թ. մայիսի 17-ին անցնելով սահմանը՝ Բասեն-Գոմաձոր-Յաղան գյուղ-Խոզլու (Խնուս)-Բյուրակն լեռ-Խորոնք գյուղ (Մշո դաշտում) երթուղով հունիսի 2-ին հասնում է Սասուն⁶: Կարո Սասունու մոտ կարդում ենք. <<Թորգոմի խումբը Դաշտից բարձրանում է Կուրտիկ, իսկ այնտեղից իջնում է Շենիկ գյուղը, ինչը աներևակայելի խանդավառություն է ստեղծում Սասունում>>⁷:

¹ Նիւթեր Զ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր, Պէյրուօ, 1985, էջ 111:

² Ներսիսյան Ա., Ջորավար Մեպուհ, Երևան, 2006, էջ 54:

³ Խմբի թվաքանակի հետ կապված կան տարբեր թվեր՝ շրջանառվում է 23 թիվը, Ռուբենի հուշերում ամրագրված է՝ մոտ 30 ձիավոր (տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 147, Արամայիս Ազնավուրյանի հուշերում հանդիպում ենք 33 (տե՛ս Արամայիս Ազնավուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 139):

⁴ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006, էջ 263:

⁵ Մեպուհ, Դրուագներ Սասունի կռիւներէն. դէպի Սասուն, Աւօյի պատմութիւնը, Կ.Պօլիս, 1910, էջ 6:

⁶ Տե՛ս Ներսիսյան Ա., Ջորավար Մեպուհ, Երևան, 2006, էջ 55:

⁷ Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուօ, 1957, էջ 667:

Выпуск 1

«Այդ խումբի մեջ կը մտնէին ռուսական բանակի ենթասպաներ, զինուորներ. ինչպէս եւ Ախլցխացի Արտաշէսը. որ սպաննուեց հետագային Պիթլիսի շրջանին մեջ, Ախալքալաքցի Նիկոլը՝ որ շատ փորձանքներ տեսաւ ու մեռաւ, զինուոր Գրիգորը, որ Ալայ բէկին երեսին գոռաց ծանր վիրաւոր վիճակի մեջ. «Շուն, իմ վերքերը մի կապէ, ես մահը կուզեմ: Եթէ առողջացնես, ես քեզ կը սպաննեմ»⁸: Ըստ Արամայիս Ազնավուրյանի «խմբի մեջ իրերի բերումով հաւաքուեցին Դաշնակցութեան մարտական ոյժերի լաւագոյն ներկայացուցիչները: Նրան մասնակցում էին Քեռին, Սեբաստացի Մուրատը: Այդ խմբի մեջ էին նաև Քաֆթառ Արշակը, որ հետո Քեռի կոչվեցավ և Պարսկաստանի մեջ պսակ ստացավ, քեռսա Արշակը, որ հետո Սեպուհ կոչվեցավ և Հայաստանի գորավար եղավ, Կարսեցի Տուրքախը, որ Թումանի դրոշակակիրը եղավ, Սոկացի Գրիգորը, Մեշեղի Ավետիսը, Գյումուշխանեցի Ավոն, Առաքելը, Սվազցի Մուրատը, որոնք ամենքն ալ մեկ մեկ պատմության դեմքեր դարձան, և ուրիշներ, որոնք աննշմար չանցան»⁹:

«Սրբիկ» հեծելախմբում անշուշտ հավաքվել էին ժամանակի պայքարի նշանավոր դեմքերը և հաստատ Թորգոմը նրանցից ոչ մեկին չէր գերազանցում, բայց գաղտնի քվեարկությամբ, չնայած նա պնդում էր, որ կան իրենից ավելի արժանավորները, ընկերները ընտրում են հենց նրան:

Թորգոմը ծնվել է Արցախ աշխարհի Շուշի քաղաքում, 1879 թվականին: Շուշին հայկական այն կենտրոններից էր, որտեղ կային նախադրյալներ ազգային-ազատագրական պայքարի ծլարձակման համար: Դեռևս թեմական դպրոցում սովորելու տարիներին Թորգոմը արդեն իսկ համակված էր ազգի փրկության գաղափարներով: Թեմական դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Մոսկվա և որպէս ազատ ունկնդիր մասնակցում համալսարանի բնագիտական դասերին, սակայն չհարմարվելով տեղի կլիմային՝ շուտով վերադառնում է Շուշի, ծավալում բուռն գործունեություն երիտասարդության շրջանում: Նրա խմբագրությամբ լույս է տեսնում «Կոկոն» թերթը, որը ազատագրական գաղափարներ էր տարածում Արցախում: Թերթի աշխատանքի արդյունքում տեղի շատ երիտասարդներ անցնում էի ՀՅԴ-ի շարքերը: Թորգոմի վրա մեծ

⁸ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 147:

⁹ Արամայիս Ազնավուրյանի հուշերում հանդիպում ենք 33 (տե՛ս Արամայիս Ազնավուրյանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 137:

Выпуск 1

ազդեցություն էր թողել Մենակը, ով նրան տարբեր հարցերում շատ էր օգնել: Հասկանալով, որ Բացի բնատուր խելքից, ինքը պետք է ձեռք բերի նաև տարբեր հմտություններ, Թորգոմը ընդունվում է զինվորական ծառայության¹⁰: «Հենց աշակերտական սեղանի վրայ Թումանը իրեն նուիրել էր կազմակերպական աշխատանքների և դարձել էր իր շրջանի աշակերտության եւ երիտասարդութեան ամենասիրելի առաջնորդը: Հետագային նա ռուսական զինուորական ծառայութեան էր գնացել եւ հասել էր վառատուրի աստիճանին (պրապորշչնիկ): Թնդանոթաձիգ էր»¹¹: Ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունն էր, որ նրանից ավելի շատ պահանջում էր ռազմական հմտություններ, որն էլ ստիպեց երիտասարդ հեղափոխականին անավարտ թողնել ուսումը և զինվորագրել սեփական ժողովրդի պայքարին:

Զինվորական աստիճան ստանալուց հետո Թորգոմը գնում է Կարս, ներկայանում Դաշնակցության «Ջրաբերդի» Կենտրոնական Կոմիտեին: Վերջինս նկատի ունենալով նրա արժանիքները, նշանակում է նրան Կարսի մարզում կուսակցական, քարոզչական աշխատանքների իրականացող: Այստեղ էին նաև կենտրոնացած զենքի ու զինամթերքի պահեստները, ամբողջ նաև մարտական խմբերի վարժեցման վայրն էր:

Թորգոմի վաղեմի նպատակը Երկիր մտնելն էր, ուստի ենթասպայի աստիճան ստանալուց հետո, նա մեկնում է Կարս: Իր գործունեությամբ նա ՀՅԴ շարքերում նորելուկ չէր, ուստի ՀՅԴ Կարսի Կենտրոնական կոմիտեն նրան հանձնարարում է կազմակերպչական և քարոզչական աշխատանքներ իրականացնել Կարսի նահանգի հայկական բնակավայրերում: Նա նաև մարզում էր նոր կազմավորվող մարտական խմբերին: Այն ժամանակ Կարսը առաջնակարգ կարևորություն ուներ որպես ռազմավարական և մարտավարական ուժերի կենտրոնացման կարևոր կենտրոններից մեկը: Կարս էին փոխադրվում նաև զենք ու զինամթերք, լրացուցիչ ուժեր: Կարսի մարզի ՀՅԴ կառույցներում մեծ դեր էին խաղում շրջիկ-գործիչները: 1902-1904 թթ. այդ գործիչներից աչքի էին ընկնում հատկապես Սարգիս Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան), Իսաջան Առաքելյանը, Թորգոմը (Թուման Թումյանց), Մենակը (Եգոր Առուստամյան),

¹⁰ Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 264- 265:

¹¹ Արամայիս Ազնաուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 137:

Выпуск 1

Իշխանը (Նիկողայոս Պողոսյան-Միքայելյան), Հակոբ Զիլինգարյանը, Ռուբենը և Համբարձում Ղարիբյանը (Պլո թագավոր): Մինչև 1903-1904 թթ. գլխավորապես Ալեքսանդրապոլի և Կարսի վրայով էր կատարվում զենքի ու զինամթերքի, մարտական ուժերի, հայդուկային խմբերի փոխադրությունը դեպի Երկիր: Այստեղից էին անցել Արամ Արամյանի, Հրայր Դժոխքի, Աղբյուր Սերոբի և ուրիշ մարտական զինատար խմբեր: Կարսի շրջանում էին գործում հայտնի հեղափոխականներ Արամը, Իշխանը, Իսաջանը և Մենակը, ովքեր տեղի հեղափոխականների հետ զենք ու զինամթերքների տեղափոխման հարցերն էին կոորդինացնում, իսկ զենքն ու զինամթերքը հիմնականում հասցնում էին Սասուն: Հայդուկային խմբերի կենտրոնացումը տեղի էր ունենում Զորավար Անդրանիկի գլխավորությամբ:

Շնորհիվ իր խելքի, գիտելիքների և բնակչության նկատմամբ դրսևորած ջերմ վերաբերմունքի, շուտով Թորգոմը Կարսի նահանգի բնակչության սերն ու հարգանքն է վայելում, «... գիտեր մարտական ոյժերի հետ յարաբերել եւ յարգանք պարտադրել: Ղեկավարի իր հանգամանքը երբեք զգալ չէր տալիս: Ուշադրութեամբ լսում էր ամեն մի մարտիկի՝ եթէ տեսնում էր, որ խօսողը խելօք բան է ասում: Դիսցիպլինան, կարգապահութիւնը բխում էր նրա ողջ էութիւնից: Ինքը այդ տեսակէտից առաջին, օրինակելի մարտիկն էր: Իր խօսքը համոզկեր էր, վճիռները մտածուած ու շատ յաճախ յանդուգն: ... Նրա ակնբախ առաքինութիւնների պատճառով էր գերազանցօրէն, որ Թումանը սիրուած էր իր խմբի մարտիկներից: Կարող եմ պնդել, որ նա մեր բացառիկ մտաւորական յեղափոխականներից էր, որ գիտեր վարել ու իրեն ենթարկել այլազան բնութագրեր ունեցող մարտական ոյժերը»¹²:

Թորգոմը, չնայած մեծ և օգտակար գործունեությանը, ձգտում էր օր առաջ մտնել Սասուն: Մարտախումբը պատրաստ էր մեկնելու, երբ Մենակը «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեին հասցեագրված նամակում հայտնում է, որ դեռևս նպատակահարմար չէ անցնել ռուս-թուրքական սահմանը, որ սահմանամերձ շրջաններում թուրքական զորքի կուտակումներ են նկատվում: Սասուն մեկնել երազող հայ մարտիկներին սակայն դա չէր կարող կանգնեցնել: Նրանց համար ավելի քան ընդունելի էին իրենց ընկեր Մեշեղի

¹² Արամայիս Ազնաուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 137:

Выпуск 1

Ավետիսի խոսքերը, որ մինչև մարդ Տարոն չգնա, նրա անմատչելի լեռները չբարձրանա, հայդուկ չի լինի: Հայ մարտիկների մեկնելու որոշումը անբեկանելի էր¹³:

Արամայիս Ազնավուրյանը իր հուշերում գրում է ,որ «այս խմբի համար ես շատ ու շատ նեղութիւններ եմ քաշել: Սրա զենքերի փոխադրութեան գործը եւս յանձնուել էր ինձ: Զենքերը կենտրոնացրի Բայբուրդ¹⁴ գյուղը»¹⁵ : Գյուղի հասարակությունը ջերմ սիրով ընդունեց խմբի բոլոր անդամներին, « գոհաբերութեան լաւագոյն ասպետները դարձեալ մնում էին Վարդանն ու Գլաւնի Փիլոսը»¹⁶, - կարդում ենք Ա. Ազնավուրյանի հուշերում:

Խմբի ուղեցույցն էր (վալադ) Սաֆոն: Առաջապահներն էին Մուրադը, Ավոն, Որսորդ Գևորգը, հետնապահներն էին Սեպուհը, Քեռին, Կայծակ Առաքելը, Սոկացի Գրիգորը: Խմբի մեկնելու նախօրեին , նախ խոսեց Թորգոմը, որն իր խոսքն ուղղեց Բայբուրդի ու այդ շրջանի մարմինների ներկայացուցիչներին ու հասարակությանը՝ խմբին ցույց տված սրտացավ վերաբերմունքի ու աջակցության համար: Խոսեց նաև Սեպուհը՝ հատկապես մատնանշելով գաղտնապահության հանգամանքը: Կարսի Կենտրոնական կոմիտեի անունից բարի երթ մաղթեց Նորհատյանը: Խումբը երկու վալատների եւ մանաւանդ Քեռու, որ շատ մօտից ծանօթ էր ճանապարհներին, խորհուրդներով շարժուեց»¹⁷, - կարդում ենք Ա.Ազնավուրյանի հուշերում: Խմբի բոլոր հայդուկները հազնվել էին միանման գեղեցիկ, զինված էին կատարելագործված հրացաններով, կարծես պետական զինվորներ լինեին: «Զրաբերդ»-ի ընկերներին հասցեագրված նամակում Թորգոմը մանրամասն նկարագրում էր իրենց անցած ճանապարհը, հանդիպած խոչընդոտները, նաև հայերի վերաբերմունքը իրենց նկատմամբ: Թեև առճակատում որպես այդպիսին չէր եղել, սակայն բազում դեպքեր էին պատահել: Ամենադժվարին պատնեշը եղել էր Արաքսի անցումը և ռուս-թուրքական սահմանի աննկատ անցումը,, որի համար նրանք ցերեկը պատսպարվում, իսկ գիշերը առաջ էին շարժվում: Մյուս միջադեպի ժամանակ այնքան մութ է լինում, որ Սաֆոն ու Որսորդը մի պահ կորցնում են ճանապարհը, բայց հետո կարողանում են զարմանալիորեն աննկատ առաջնորդել իրենց զինակիցներին: Ապա հանդիպում են ռուսական զորամասի,

¹³ Տե՛ս Գևորգյան Հ., նշվ.,աշխ. , էջ 268:

¹⁴ Բայբուրդը գտնվում է Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 25 կմ հարավ-արևմուտք:

¹⁵ Արամայիս Ազնավուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 137:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Արամայիս Ազնավուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, 1938, թիւ 7, էջ 140:

Выпуск 1

որից աննկատ հեռանալուց հետո ապաստանում են մոտակա գյուղերից մեկում, տեղավորվում մարագներում, որտեղ կար վախ, որ իրենց կհայտնաբերեն, քանզի անընդհատ այդ կողմով թուրքեր էին վխտում: Ճանապարհին հայերը գերի են վերցնում երեք քրդի, որոնցից մեկը մոլլա էր: Մոլլան զարմացած հայերի հարգալից վերաբերմունքից, ազատություն ստանալուց հետո խոստանում է դրա մասին պատմել բոլորին: Այս դեպքից հետո հայ մարտիկներին հետապնդում են մի խումբ քրդեր, ովքեր խաղաղություն են հայտարարում, խնդրելով ազատ արձակել մոլլային, բայց լսելով, որ նա ազատ է ցանկանում են կողոպտել հայերին, սակայն արժանի հարված են ստանում:

Ապա Թորգոմը պատմել է նաև, որ տարբեր վայրերի հայ բնակչությունը տարբեր կերպ էր ընդունում իրենց: Այսպես Բասենում մարտախմբի անդամները զենքի սպառնալիքով էին ապաստան գտնում, հավանաբար այն պատճառով, որ այս սահմանային գոտին հայ մարտիկների համեմատաբար շատ անցնելու հետևանքով բազմիցս ենթարկվել էր բռնությունների: Խնուսում ավելի բարյացակամ էին, իսկ Մասնո ժողովրդի ընդունելության մասին խոսելն իսկ ավելորդ է, նրանք դիմավորում էին մարտիկներին որպես իրենց ազատարարների: Հետագայում ևս բազում նամակներով Թորգոմը տեղեկացնում է երկրի իրավիճակի մասին: Նա գրում էր, որ սպասվում են այնպիսի դեպքեր, որոնք իրենց նմանը չեն ունեցել ողջ Տաճկահայաստանում¹⁸:

1903-1904 թթ. ՀՅԴ կուսակցության Մասուն առաքած խմբերից «Մրրիկը» միակն էր, որ հաջողությամբ կարողացավ այնտեղ հասնել, իր հետ տանելով «30 հատ հրացան ու 13000 փամփուշտ»¹⁹:

Անժխտելի է նաև այն կովող ուժերի որակը, որոնք Մասուն էին մուտք գործում «Մրրիկ» խմբի կազմում, բայց այն բավարար չէր տիրող կացությունը շտկելու համար: Իսկ կացությունը բարդ էր, քանզի խմբի Մասուն մուտքից հետո աստիճանաբար շրջափակվեց այն և կտրվեց մյուս շրջաններից: Այն առիթ հանդիսացավ թուրքական կառավարության համար՝ արագացնելու իր հարձակումը Մասունի վրա, որի արդյունքում ձախողվեց 1905 թ. ամառվա համար նախատեսված Տարոնի, Մասնո, Բիթլիսի, Վասպուրականի և Էրզրումի

¹⁸ Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 275, 276:

¹⁹ Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 55:

Выпуск 1

որոշ շրջանների ընդհանուր ապստամբության պլանը, ստիպելով Մասունին դիմելու ապստամբության 1904 թվականին: